

## Արձանագրություն 5

2016թ. ապրիլի 30-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 28-ը:

Նախագահ՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ իրականացրած բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի վերալիցենզավորմամբ պայմանավորված նոր ուսումնական պլանների մշակման գործընթացի մասին:

/զեկ՝ պրոռեկտոր Ն.Կուսուզյան/

2.ԳՊՀ իրականացրած եվրոպական ծրագրերի ընթացքի և արդյունքների մասին:

/զեկ՝ պրոռեկտոր Ա.Ապրոյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուսուզյանը ներկայացրեց բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի վերալիցենզավորմամբ պայմանավորված նոր ուսումնական պլանների մշակման գործընթացը: Նշվեց, որ արդյունավետ աշխատանքներ են տարվում նոր ուսումնական պլանների մշակման, ինչպես նաև կրթական ծրագրերի նորացման և թարմացման ուղղությամբ: Նոր որակավորումը պահանջում է նոր մոտեցում համալսարանում իրականացվող ուսումնական գործընթացի նկատմամբ:

ԳՊՀ պրոռեկտոր Ա.Ապրոյանը հանգամանորեն ներկայացրեց համալսարանում իրականացված եվրոպական ծրագրերի ընթացքը և արդյունքները: Զեկուցողը անդրադարձավ ինչպես ավարտված, այնպես էլ ընթացքի մեջ եղող ծրագրերին, որոնք վերաբերում են գործունեության տարբեր ոլորտների: Կարևորվեց փորձի ձեռքբերումը, վերլուծությունը, դրական և բացասական կողմերի բացահայտումը: Այնուհետև Ա.Ապրոյանը ներկայացրեց Բոնոյի Մասարիկի համալսարանում իր կատարած աշխատանքը:

Ընթացիկ հարցերի շարքում գիտխորհրդի քննարկմանը և հաստատմանը ներկայացվեցին մի քանի փաստաթղթեր. «2016-17 ուստարվա առկա ուսուցման ընդունելության՝ մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտությունները, տեղերը

և ուսման վարձերը», «ԳՊՀ 2016-17 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության` քակալավրիատի կրթական ծրագրի մասնագիտությունները, ընդունելության քննությունները, տեղերը և ուսման վարձերը», «ԳՊՀ 2016-17 ուստարվա առկա ուսուցման ընդունելության` քակալավրիատի կրթական ծրագրի մասնագիտությունները, ընդունելության քննությունները, տեղերը և ուսման վարձերը»: Առաջարկվեց հաստատել ներկայացված փաստաթղթերը: Քննարկվեց նաև Ն.Ռափյանի «Լատիներեն և դեղագործական տերմինաբանություն» ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

Նիստի ավարտին ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը նշեց, որ հաջողություններ են գրանցվել բոլոր եվրոպական ծրագրերի գծով, տարվում են բավականին արդյունավետ աշխատանքներ: ԳՊՀ-ն պարտաճանաչ համագործակցի համբավ ունի:

Հիմք ընդունելով գեկուցումները և առաջարկությունները` գիտխորհուրդը

Որոշեց`

- 1.Ն.Կուտուզյանի գեկուցումն ընդունել ի գիտություն:
- 2.Շարունակել աշխատանքները ուսումնական պլանների, նոր ծրագրերի մշակման ուղղությամբ:
- 3.Ա.Ապրոյանի գեկուցումն ընդունել ի գիտություն, հավանություն տալ եվրոպական ծրագրերի ուղղությամբ տարվող աշխատանքներին:
4. Հաստատել 2016-17 ուստարվա առկա ուսուցման ընդունելության` մագիստրոսի կրթական ծրագրի ուսման վարձաչափերը:
- 5.Հաստատել ԳՊՀ 2016-17 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելության` քակալավրիատի կրթական ծրագրի ուսման վարձաչափերը:
- 6.Հաստատել ԳՊՀ 2016-17 ուստարվա առկա ուսուցման ընդունելության` քակալավրիատի կրթական ծրագրի ուսման վարձաչափերը:
- 7.Տպագրության երաշխավորել Ն.Ռափյանի «Լատիներեն և դեղագործական տերմինաբանություն» ձեռնարկը:

Նիստի նախագահ`

Գիտքարտուղար`

/Ռ.Հակոբյան/

/Թ.Ասոյան/